

## **ՀԱՍՏԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ (PR) ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

### **ՆՎԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

**Միակ կենսունակ բռնապետությունն արդեն  
հասարակական կարծիքի տիրապետությունն է:  
Ժակ Սեգելա**

Արդեն 20 տարի է, ինչ Հայաստանի Հանրապետությունն ընտրել է ժողովրդավարական զարգացման ուղին, որի անբաժանելի մասն են քաղաքացիական հասարակության ձևավորումը, պետական կառույցների, զանգվածային շարժումների, կուսակցությունների, հասարակական նախաձեռնությունների և այլնի զարգացումը: Ժողովրդավարական հասարակությունը ծգուուն է պետական իշխանության ապակենտրոնացմանը՝ իր իրավասությունների մի մասը փոխանցելով ինքնակառավարման մարմիններին, խթանելով ինստիտուտների, կազմակերպությունների և հասարակայնության միջև արդյունավետ փոխհարաբերությունների անրապնդումը՝ իհմնված միասնական շահերի և համագործակցության վրա: Հասարակությունուն նման փոխընթացման մթնոլորտի ձևավորման լավագույն գործիք է քաղաքակիրք աշխարհում արդեն վաղուց կայացած և իր տեղը գտած հասարակայնության հետ կապերի (public relations) ինստիտուտը, որը ժողովրդավարական քաղաքական համակարգի և շուկայական տնտեսությանը բնորոշ մրցակցության դաշտի կառավարման անբաժանելի մասն է:

PR-ն իր էությամբ ժողովրդավարության արդյունք է: Այն ծնունդ է առել և զարգացում ապրել ժողովրդավարության հետ կամատեղ, սնվել նրանով և ապահովել նրա ընթացքն, ընկալուն ու տարածունը:

Ժողովրդավարությունը և PR-ը փոխկապակցված են. PR-ն անհնար է առանց ժողովրդավարության, քանի որ արդյունավետ է միայն այն դեպքուն, եթե մարդիկ իրավունք ունեն ընտրելու՝ ուն ծայն տան, որտեղ աշխատեն, ինչ գնեն: Սակայն ժողովրդավարությունն էլ իր հերթին հնարավոր չէ առանց PR-ի, քանի որ այն ենթադրում է տեղեկատվության, հայացքների, մտքերի և գաղափարների փոխանակման, արտահայտման ազատություն<sup>1</sup>:

Համաշխարհային փորձը վկայում է, որ PR-ը ժողովրդավարության ինքնատիպ ֆերմենտ է, որն ավելացնում է պետական-քաղաքական և տնտեսական գործընթացների թափանցիկությունը<sup>2</sup>: PR-ը հասարակական համա-

<sup>1</sup> **Տես Պոլ Խոլմս.** PR невозможен без демократии, а демократия — без PR. <http://www.reklamaster.com/articles/id/338/index.html>

<sup>2</sup> **Королько В. Г.** Основы паблик рилейшнз. М., 2001, М., с. 349.

ձայնության ապահովման կարևորագույն գործիք է, որն օգնում է հաղթահարելու հասարակական լարվածությունը՝ շտկելով հասարակայնության որոշակի խնբերի դժգոհությունը ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ծրագրերից և նախագծերից: Ինդիրա Գանդին PR-ն անվանել է «Ժողովրդավարության մեխանիզմները յուղող նյութ»<sup>3</sup>:

Չի կարելի անտեսել հակադիր կարծիքը, համաձայն որի՝ ժամանակակից հասարակություններում կայլ ժողովրդավարության զարգացման և PR-ի արդյունավետության միջև հակադարձ համեմատական է:

Համաձայն այս տեսակետը պաշտպանում մասնագետների՝ PR-մեխանիզմները, ըստ եռթյան, ժողովրդավարության պատրանք են ձևավորում՝ առաջարկելով շինուու կառույցներ. անհատը, քաղաքացին փոխարինվում է ազդեցության պասիվ օբյեկտով (օրինակ՝ ընտրազանգվածով, սպառողներով), որի որակները PR-մասնագետին հետաքրքրում են նույնանուան, որքան, օրինակ, կահույքագործին փայտի որակը, տեսակը, այսինքն՝ որպես հումք աշխատանքի համար: Քաղաքացիների կողմից որոշումների ընդունումը փոխարինվում է վերնախավի թելադրած արդյունքի արտադրությամբ, իսկ ընտրազանգվածին տուտալիզատորի պես խաղարկություններ են առաջարկվում՝ «ընտրություններ» անվանմամբ: Քաղաքացիների հավասարությունը փոխարինվում է իրենց համանմանությամբ, չտարբերվողությամբ՝ ամորֆությամբ<sup>4</sup>:

Այս տեսակետներից յուրաքանչյուրի իրավասությունը պայմանավորված է նի քանի հանգամանքով՝

➤ հասարակությունում ժողովրդավարության մակարդակով և ժողովրդավարական ինստիտուտների գործառության ավանդույթներով, մասնավորապես՝ ընտրությունների ինստիտուտի և ԶԼՄ-ների,

➤ PR-ի եռթյան, գործառույթների և նպատակների համարժեք ընկալմանը և մեկնարաբանմանը,

➤ PR-մասնագետների և պատվիրատու կազմակերպությունների գործառության բնույթով,

➤ հասարակայնության ինքնագիտակցությամբ և ինքնաշնկալմամբ:

Վերոնշյալ գործոններով են իրենց պայմանավորված PR-ի ինստիտուտի կայացման առանձնահատկությունները հայաստանյան իրականության մեջ:

1. **Ժողովրդավարությունը Հայաստանում:** Ընտրություններից ընտրություն իշխանությունների լեգիտիմության խնդրի բարձրաձայնումը հայաստանյան դեմոկրատիայի ակներև հատկանիշներից է: Հասարակական ինստիտուտների գործառնան թափանցիկությունը դեկլարատիվ և ցուցադրական բնույթ ունի. կա ծեղ, բովանդակությունը բացակայում է: «Պետության՝ իր քաղաքացիների հետ հարաբերությունները, կարելի է ասել, հետադարձ կապ չեն ենթադրում: Մինչդեռ PR-ը գիտակցված երկ-

<sup>3</sup> Гавриш О. Смазочный материал демократии. Украинский рынок PR-услуг переживает бурный рост, "Новый понедельник", 19-25 апреля 2004.

<sup>4</sup> Օրինակ՝ զանգվածների նման վարդային բնութագիրը ներկայացնելու համար գործածության մեջ են դրվել հատուկ հասկացություններ՝ «շատություն», «массовка», «тусовка», Նեզրիի տերմինը՝ «multitude» (տես Բուզгалиն А. В. Мера демократии обратно пропорциональна эффективности PR, «Альтернативы», 2005, № 4):

կողմանի հաղորդակցության կազմակերպումն է, որի նպատակն է կազմակերպության, տվյալ դեպքում՝ պետության և հասարակության միջև փոխըմբռնման, համագործակցության մթնոլորտ և փոխշահավետ հարաբերություններ ձևավորել:

Մրան ավելացնենք հասարակության վստահության նվազումը ԶԼՍ-ների, մասնավորապես հեռուստատեսության նկատմամբ, դրանց տրամադրած տեղեկատվության ոչ համարժեք ընկալումն ու մեկնաբանումը (սա գրեթե անհնար է դարձնում PR-մասնագետների աշխատանքը, որոնց մասնագիտական գործառույթներից կարևորագույնը՝ տեղեկատվական հոսքերի ձևավորումն ու կառավարումը, իրականացվում է հենց ԶԼՍ-ների միջոցով):

**2. PR-ի էռության համարժեք ընկալման խնդիրները:** Մեր երկրում հասարակայնության հետ կապերը նոր ոլորտ է, ուստի այն դեռ չի ստացել իր աշխարհայացքային, գաղափարախոսական ինաստավորումը: PR-ը մեզանում դեռ չի ընկալվում որպես «հասարակական համաձայնության հասնելու գիտություն և արվեստ»<sup>5</sup>: Այն, կարծես պատվիրատուի ցանկություններից կախված, հարմարվողական, ուստիլիտար բնույթ ունի: Այս հասկացության ոչ համարժեք ընկալումը պայմանավորում է նրա բացասական համբավը: PR հասկացությունը գուգորդվում է «սև» կամ «կեղտուտ» հաղորդակցական տեխնոլոգիաների, մանհպույացիոն հնարքների հետ<sup>6</sup>: Եվ դրա մեղավորը ոչ միայն PR-մասնագետներն են, այլև նրանց պատվիրատուները, որոնց համար PR-ը, կախարդական գավազանի ննան, իրենց առաջխաղացման խնդիրների լուծման, մրցակցին չեզոքացնելու հերթական հնարքներից է: Չհասկանալով, թե ինչ է PR-ը, մասնագետին տրվում են անիրատեսական առաջադրանքներ, և սպասվող արդյունքն էլ իրատապ, տեսանելի և շոշափելի պետք է լինի: Իսկ պահանջարկը առաջարկ է ձևավորում: Ուստի, մեր ունեցած PR-ն այդպիսին է:

**3. PR-մասնագետների և կազմակերպությունների բնույթը:** Հայաստանի PR-ծառայությունների շուկան ներկայացված է մի կողմից արդի կամ նախկին լրագրողներով, որոնք, առաջնորդվելով ժուռնալիստիկայում ընդունված խաղի կանոններով, լավագույն դեպքում վճարովի գովազդային բնույթի հոդվածներ են տպագրում, մյուս կողմից՝ գովազդային կամ մարքեթինգային բնույթի կազմակերպություններով, որոնք մասնագիտանում են հատուկ միջոցառումների (promo-actions, promo-events, media-events) կազմակերպման վրա:

Քաղաքական PR-ի հայաստանյան շուկան ավելի լայն է, քան կոմերցիոնը: Սակայն այստեղ աշխատող մասնագետները գաղտնիության պահպանման խնդիր ունեն: Վերջիններս ձգտում են ստվերում մնալ, ուստի հիմնականում մասնագիտական հեղինակավոր բրենդներ չեն ձևավորում:

Իրավիճակը փոքր-ինչ լավատեսական է կորպորատիվ PR-ի ոլորտում: Այստեղ մեծ կորպորացիաները հիմնականում ունեն սեփական ենթակառուցվածքները, որոնք բավականին արդյունավետ են դրսի գործըն-

<sup>5</sup> **Сэм Блэк.** Паблик Рилейшнз. Что это такое? М., 1990.

<sup>6</sup> **Steve Macmillan Robert,** PR, Journalism and Democracy: How individuals might guard themselves against the manipulation of public opinion, 2005:

կերների, ներդրողների հետ շփումը կազմակերպելու գործում (investor relations) կամ միջազգային պահանջներին համապատասխան ներկայացումների և հաշվետվությունների իրականացման ժամանակ:

Սակայն երկրի ներսում հաղորդակցման խնդիրների լուծման ընդունված ձևերը՝ պետական հաստատությունների հետ հարաբերությունները (government relations), լոքրինգը կամ ադվոկացիան, չեն գործում: Իսկ հասարակայնության հետ հարաբերությունները հանգեցվուն են սոցիալական պատասխանատվությանը կամ բարեգործությանը:

Ինչ վերաբերում է մասնագիտական ընկերակցություններին, ապա առկա իրավիճակը բավականին հետաքրքիր է: ՀՀ-ում գործում են հայկական երկու PR-ասոցիացիաներ, որոնց գործունեությունը, որքան էլ տարօրինակ է, թափանցիկ չէ թե՝ մասնագիտական հանրույթի, թե՝ լայն զանգվածների համար:

4. **Հասարակայնության վիճակը:** Յարց է առաջանում. արդյո՞ք ընկալում է հասարակայնությունն ինքն իրեն՝ որպես որոշակի կազմակերպություններից եկող հաղորդագրությունների հասցեատեր, արդյո՞ք հանդիսանում կամ ցանկանում է հանդիսանալ նախաձեռնվող երկխոսության մասնակից (ինչպես արդեն տեսանք՝ Հայաստանում առայժմ բացակայում կամ լավագույն դեպքում խիստ սակավ են նման նախաձեռնությունները): Ըստ այդմ մեզանում ներկայումս տիրուն է հետևյալ վիճակը.

✓ Հասարակության վստահության մակարդակի անկում քաղաքական ինստիտուտների հանրեալ:

✓ Հաղորդակցման ոլորտում ոչ ֆորմալ հաղորդակցային մեխանիզմների (ասեկուսներ, բամբասանք) գերակայություն, անկառավարելիություն, անվերահսկելիություն և գործառության տարերայնություն:

✓ Հասարակական ապատիա, չարդարացված սպասումների և ակնկալիքների անորոշության պայմաններում տրամադրությունների փոփոխականություն ու անկանխատեսելիություն: Հասարակության տարրալուծվածության պայմաններում չեն գործում հաղորդակցային ուղիները, չկա վստահություն ցանկացած հաղորդագրության նկատմամբ:

Անփոփելով ասենք, որ եթե մենք PR-ը դիտարկում ենք ամենապարզ սխեմայով՝ որպես կազմակերպությունից դեպի հասարակայնության թիրախային լսարաններ հաղորդագրության փոխանցում հիմնականում ԶԼՄ-ների միջոցով, ապա հայաստանյան իրականության մեջ այս շղթայի ոչ բոլոր օղակներն են գործում բավարար:

Այսպիսով՝ Հայաստանում PR-ը կարիք ունի ժողովրդավարության, իսկ ժողովրդավարությունը՝ իր սկզբունքներով, իդեալներով, դեմոկրատական ինստիտուտներով և ատրիբուտներով, PR-ի: Ավելին՝ Հայաստանում այսօր PR-ը նույնպես կարիք ունի PR-ի:

**НВАРД МЕЛКОНИЯН – Особенности институционализации связей с общественностью (PR) в РА.** – Статья рассматривает проблемы развития технологий PR в контексте демократических преобразований, происходящих в Армении. Анализируются существующие подходы к соотношению понятий PR и демократия. Согласно первому подходу PR не только является приклад-

ной научной дисциплиной и практикой репутационного менеджмента, но и своеобразным инструментом демократии, который увеличивает прозрачность процессов государственно-политической и экономической жизни, служит важным инструментом достижения консенсуса в обществе. Второй подход обращает внимание на то, что с ростом уровня демократизации общества набирают силу манипулятивные технологии. В статье показаны основные проблемы, препятствующие или замедляющие развитие PR-технологий в армянском обществе.

**NVARD MELKONYAN – *The Peculiarities of Institutionalization of Public Relations in RA.*** – The article is devoted to the problems of public relations technologies in the context of the democratic transformations in Armenia. The author analyzes the existing approaches to the relationship of PR and democracy. According to the first: PR is not only an applied science and practice of reputation management, but also a unique tool for democracy, which increases the transparency of public-political and economic life, is an important tool for achieving consensus in society. The second approach draws attention to the trend of increasing the use of manipulative technologies in the meantime increasing of democratization level of society. The author brings the main problems that are preventing or retarding the development of PR-technologies in Armenian society.